# Դաս 30. Էպոսի ճյուղերը: Սանասար և Բաղդասար

Լուսացույց ճյուղ

## Դեղձուն-Ծամի նամակը

*«Քաջանց թագավորի աղջիկ Դեղձուն-Ծամից*
*Շատ բարև Սանասարին.*
*Շատ բարև Բաղդասարին, Սանասարին:*
*Սանասա՛ր փղա,*
*Ես Պղընձե քաղքի թագավորի աղջիկն եմ:*
*Իմ սի՛րտ՝ քանց էսա դաշտարկ կուժ սար-սո՛ւրբ է*
*Իմ գլուխ՝ քանց էսա լիք կուժ լափ-լիքն է.*
*Ասլըծու շնորհքով լցուկ եմ:*
*Շատեր էկած իմ վերա, ինձ ուզելու.*
*Քառսուն փեղե քառսո՛ւն մարդ է էկած,*
*Ես խոսք չեմ տվե, ես հա չեմ ասե.*
*Էրազով ըզքեզ տեսեր եմ, արի ինձի տա՛ր.*
*Ինձի շա՛տ դուր կը գաս դու:*
*Սանասա՛ր փղա,*
*Էս թուղթ կը գրեմ քե՛զ համար.*
*Ջուր ե՛րբ ես տի մնամ էստեղ քո ապով.*
*Գլուխ թացեր ես, չկտրես,*
*Արի, ինձի տար քեզ համար»:*

*Այս նամակի պատճառով կռիվ է սկսվում եղբայրների միջև, քանի որ Դեղձուն-Ծամը երկու անգամ բարև էր գրել Սանասարին և մեկ անգամ բարև՝ Բաղդասարին: Նա մտածում էր, որ եղբայրը իրենից բան է թաքցնում:*